

ԱՐՑԱԽԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ «ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԻՑ» ՀԵՏՈ.

ՍԱՀՄԱՆԻՑ ԱՆԴԻՆ ՄՆԱՑԱԾ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ...

Հիմնաբառեր. Արցախի Հանրապետություն, վարչական շրջաններ, գրավված տարածքներ, հանձնված տարածքներ, տնտեսություն, արդյունաբերություն, գյուղատնտեսություն

2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված արցախյան 2-րդ պատերազմն ավարտվեց Արցախի և Հայաստանի համար մարդկային, տարածքային և տնտեսական ծանր կորուստներով, որոնց իրական ծավալները դեռևս կարիք ունեն որոշակի հստակեցման և համակողմանի գնահատման: Ուստի սույն հոդվածի շրջանակում Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության և այլ պաշտոնական աղբյուրներում առկա տվյալների և փաստացի տարածքային փոփոխությունների համադրմամբ իրականացվել է պատերազմական գործողությունների ավարտին Ադրբեյջանի կողմից գրավված, եռակողմ հայտարարությամբ թշնամուն հանձնված և Արցախի տնտեսության տակ մնացած տարածքների տնտեսական ներուժի նախնական ուսումնասիրություն՝ բացահայտելու համար պահպանված և կորսված տնտեսական հնարավորությունները:

Վարչատարածքային բաժանման միավորների դասակարգչի՝ համաձայն՝ նախքան արցախյան 2-րդ պատերազմի մեկնարկն Արցախի Հանրապետությունը բաղկացած էր 8 վարչական շրջաններից՝ առանձին շրջանի կարգավիճակ ունեցող մայրաքաղաք Ստեփանակերտ, Ասկերանի շրջան, Հադրութի շրջան, Մարտակերտի շրջան, Մարտունու շրջան, Շահումյանի շրջան (շրջկենտրոնը՝ Քարվաճառ), Շուշիի



Աննա
ՓԱԽԼՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու, դոցենտ

2006 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՐՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Համաշխարհային տնտեսագիտություն», իսկ 2010 թ.՝ ՀՊՏՀ ասպիրանտուրան՝ «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2012 թ. պաշտպանել է թեկնածուական արեւնախոսություն՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2019 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում: ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ է, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի իրավիրյալ փորձագետ: Վերապատրաստվել և դասախոսություններ է վարել եվրոպական մի շարք բուհերում: Հեղինակ է 43 գիտական և 6 գիտահանրամատչելի վերլուծական աշխատանքների:

 ORCID ID <https://orcid.org/0000-0002-5854-2473>

¹ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դասակարգիչ ՀԳ-007-2014» (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 20-ի՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Վարչատարածքային բաժանման միավորների դասակարգիչ» ընդունելու մասին» N 106-Ն հրամանի հավելված):

շրջան և Քաշաթաղի շրջան (շրջկենտրոնը՝ Բերձոր): Բացի Շահումյանի և Քաշաթաղի շրջաններից, մյուսների շրջկենտրոնները համանուն քաղաքներն են:

2020 թ. սեպտեմբերի 27-ից ընթացող պատերազմական գործողությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության նախագահների 2020 թ. նոյեմբերի 10-ի եռակողմ հայտարարության հետևանքով² 8 վարչական շրջաններից Արցախի Հանրապետության կազմում են մնացել մայրաքաղաք Ստեփանակերտը, Մարտակերտի շրջանի զգալի մասը, Մարտունու և Ասկերանի շրջանի մի մասը և Շուշիի շրջանի որոշ գյուղական համայնքներ:

Թուրք-ահաբեկչական զորամիավորումների համառ աջակցությամբ Ադրբեջանին հաջողվել է ռազմական ճանապարհով հաստատվել Հադրութի շրջանում, Քաշաթաղի շրջանի հարավային հատվածում, Մարտունու, Ասկերանի, Մարտակերտի ու Շահումյանի շրջանների որոշ բնակավայրերում:

Հադրութի շրջանում էին ներառված Խորհրդային Ադրբեջանի Զաբրայիլի շրջանն ու Ֆիզուլու շրջանի ազատագրված տարածքները: Արցախա-ադրբեջանական 2-րդ պատերազմի ընթացքում Ադրբեջանը կարողացել է գրավել Հադրութի շրջանի 30 համայնքից 28-ը: Բացառություն են Խծաբերդ և Հին Թաղեր գյուղերը, որոնց ուղղությամբ էլ 2020 թ. դեկտեմբերի 12-ին, ՀՀ պաշտպանության նախարարության տարածած մամլո հաղորդագրության համաձայն, գրանցվել է ադրբեջանական կողմի հարձակողական գործողությունների առաջին դեպքը հրադադարի հայտարարությունից հետո³:

Մարտունու շրջանի 36 համայնքից հակառակորդի տիրապետության տակ է հայտնվել 7-ը՝ Զարդանաշեն համայնքը, Թաղավարդ գյուղական համայնքի Թա-

ղավարդ գյուղը, Շեխեր, Զիվանի, Սարգըսաշեն, Վազգենաշեն համայնքներն ու Ճարտար քաղաքային համայնքի Ներքին Ճարտար քաղաքը:

Մարտակերտի շրջանի 43 համայնքից Ադրբեջանը գրավել է 8-ը՝ Թալիշ, Հովտաշեն, Մատաղիս, Նոր Այգեստան, Նոր Կարմիրավան, Նոր Հայկաջուր, Նոր Մարաղա և Նոր Սեյսուլան:

Ասկերանի շրջանի 42 համայնքից Ադրբեջանի ենթակայության տակ է անցել 8-ը՝ Ակնաղբյուր, Ավետարանոց, Արմենակավան, Զրաղացներ, Մադաթաշեն, Սղնախ, Մոշխմատ և Ուղտասար:

Շուշիի շրջանում, որը բաղկացած էր Շուշի քաղաքից և 6 գյուղական համայնքներից (Եղցահող, Լիսագոր, Հին շեն, Մեծ շեն, Քարին տակ, Քիրսավան)⁴, պատերազմական գործողությունների հետևանքով փաստացիորեն թշնամու տիրապետության տակ են անցել Շուշի քաղաքը, Քարին տակ և Քիրսավան գյուղերը:


Ըստ գինադադարի հաստատման մասին հայտնի հայտարարության՝ 2020 թ. նոյեմբերի 20-ին Ադրբեջանին է հանձնվել Աղդամի շրջանը, որն այդ անվանումով գոյություն է ունեցել 1930-1993 թթ.՝ որպես Խորհրդային Ադրբեջանի վարչական շրջան: 1993 թ., ազատագրվելով հայկական զինված ուժերի կողմից, դրա զգալի մասը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային բաժանմամբ ընդգրկվել էր Ասկերանի և Մարտունու շրջաններում (տե՛ս համապատասխան շրջանների կարմիր հատվածները նկար 1-ում):

Քելբաջարի շրջանը, ըստ նախնական պայմանավորվածության, պետք է վերադարձվեր Ադրբեջանի Հանրապետությանը մինչև 2020 թ. նոյեմբերի 15-ը, սակայն կողմերի լրացուցիչ համաձայնությամբ ժամկետը երկարաձգվեց մինչև նոյեմբերի 25-ը: Մինչև խորհրդայնացումը Հայաստանի կազմում ընդգրկված, իսկ 1930-1993 թթ. Խորհրդային Ադրբեջանի մաս

² Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը, 10.11.2020, <https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/>

³ ՀՀ պաշտպանության նախարարության մամլո հաղորդագրություն, 12-ը դեկտեմբերի, 2020 թ., <https://www.mil.am/hy/news/8733>

⁴ Մելքումյան Ս., Արցախ-Ղարաբաղ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Եր., «Յասուն ՍՊԸ», 2010, 415 էջ, ISBN 978-9939-829-02-9, էջ 308:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Արցախի Հանրապետության վերափոխված քարտեզը⁵

կազմող Քելբաջարի (հայեցի անվանմամբ՝ Քարվաճառի) շրջանն ազատագրվել էր Արցախյան հերոսամարտի ընթացքում՝ Արցախի Հանրապետության վարչական բաժանմամբ ներառվելով Շահումյանի վարչական շրջանում:

Տարածքների փոխանցման գործընթացն ավարտվել է 2020 թ. դեկտեմբերի 1-ին՝ Լաչինի շրջանի հանձնմամբ: Մինչև խորհրդայնացումը՝ Հայաստանի, իսկ 1930-1992 թթ.՝ Խորհրդային Ադրբեջանի կազմում ներառված Լաչինի (հայկական անվանումը՝ Բերձոր) շրջանը ազատագրումից հետո դարձել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաջաթաղի շրջանի մաս՝ նախկին ադրբեջանական Չանգելանի ու Կուբաթլուի հետ միասին: Լաչինի 5 կմ լայնությամբ միջանցքը, որը, շրջանցելով Շուշի քաղաքը, ապահովելու

է Արցախի Հանրապետության մնացյալ տարածքների կապը Հայաստանի Հանրապետության հետ, ըստ եռակողմ հայտարարության, մնում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմի վերահսկողության ներքո⁶ (Արցախի Հանրապետության վերափոխված քարտեզը ներկայացված է նկար 1-ում):

Բնականաբար, տարածքների հետ միասին, Արցախի Հանրապետությունը գրկվել է նաև տնտեսական գործունեության ապահովման կենսական նշանակության մի շարք ենթակառուցվածքներից՝ պարփակվելով հետագա զարգացման համար չափազանց սահմանափակ հնարավորությունների տիրույթում: Այս իմաստով, հույժ հրատապ խնդիր է դառնում առկա ռեսուրսների և հնարավորությունների վերագնահատումը՝ դրանք հետպատերազմյան տնտեսության վերականգնմանը ծառայեցնելու նկատառումներով:

Համաձայն ԱՀ 2019 թ. վիճակագրական տարեգրքի՝ Արցախի ՀՆԱ 44.8%-ն ապահովվել է առևտրի և ծառայությունների ոլորտի հաշվին, արդյունաբերության մասնաբաժինը երկրի ՀՆԱ կառուցվածքում կազմել է 28.5%, գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնաբուծության մասնաբաժինը՝ 10.9%, իսկ 9.6%-ն ապահովել է շինարարության ոլորտը⁷:

Արցախի արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալներն ըստ առանձին վարչական շրջանների ներկայացված են աղյուսակ 1-ում: Այսպես՝ 2018 թ. Արցախի Հանրապետությունում, ընդհանուր առմամբ, արտադրվել է 125 մլրդ դրամի արդյունաբերական արտադրանք (ներառյալ՝ աշխատանք կամ ծառայություն), որի գերակշիռ մասը՝ շուրջ 73 մլրդ դրամ արժողությամբ կամ ամբողջի 58.4%-ը, բաժին է ընկնում Մարտակերտի շրջանին, որին հաջորդում է մայրաքաղաք Ստեփանակերտը (28.4%): Բարեբախտաբար,

⁵ Կապույտ գույնով են ներկված 2020 թ. արցախյան 2-րդ պատերազմի ընթացքում՝ մինչև նոյեմբերի 10-ի եռակողմ հայտարարության ստորագրումն Ադրբեջանի կողմից փաստացիորեն գրավված տարածքները: Կարմիր գույնով նշված տարածքներն Ադրբեջանի Հանրապետության տիրապետության տակ են անցել՝ համաձայն 2020 թ. նոյեմբերի 10-ին Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև ստորագրված հայտարարությամբ սահմանված ժամանակացույցի:






⁶ Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը, 10.11.2020, <https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/>

⁷ ԱՀ ԱՎԾ, Արցախի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2019, էջ 188:

ԱՂՅՈՒՍԱԿ 1⁸

Արցախի արդյունաբերական արտադրանքի ծավալն ըստ շրջանների⁹

Արցախի Հանրապետության շրջանները 2020 թ. սկզբին	Արդյունաբերական արտադրանքը 2018 թ. (աշխատանք, ծառայություն)	
	Ծավալ (մլն դրամ)	Կառուցվածք (%)
Ստեփանակերտ	35534.8	28.4
Ասկերան	4044.2	3.2
Հաղրուֆ	2307.3	1.9
Մարտակերտ	72988.2	58.4
Մարտունի	4520.4	3.6
Շահումյան	1700.8	1.4
Շուշի	478.4	0.4
Քաշաթաղ	3432.0	2.7
Ընդամենը	125006.1	100

-  Ամբողջությամբ Արցախի Հանրապետության տիրապետության տակ գտնվող վարչական շրջաններ:
-  Առավելապես Արցախի Հանրապետության տիրապետության տակ գտնվող վարչական շրջաններ:
-  Մասամբ Արցախի Հանրապետության տիրապետության տակ անցած վարչական շրջաններ:
-  Առավելապես Ադրբեջանի Հանրապետության տիրապետության տակ անցած վարչական շրջաններ:
-  Ամբողջովին Ադրբեջանի Հանրապետության տիրապետության տակ անցած վարչական շրջաններ:

ամբողջովին կամ մասնակիորեն Ադրբեջանի Հանրապետության տիրապետության տակ անցած շրջանները բնութագրվում են արդյունաբերական արտադրանքի թողարկման անհամեմատ համեստ կարողություններով: Մասնավորապես՝ հակառակորդին անցած Հաղրուֆի (1.9%), Շահումյանի (1.4%) և Քաշաթաղի (2.7%) շրջանները միասին թողարկում էին ընդամենը 7.44 մլրդ դրամի արդյունաբերական արտադրանք, մինչդեռ մասնակիորեն կորսված Մարտունու, Ասկերանի և Շուշիի շրջաններում արդյունաբերական արտադրանքի գումարային ծավալը շուրջ 9 մլրդ դրամ է կամ ընդհանուր արդյունաբերության 7.2%-ը:

Արցախի շրջանների դերակատարումն առանձնապես չի տարբերվում նաև արդյունաբերական արտադրանքի թողարկման հնարավորություններն ըստ տնտեսական գործունեության տեսակների դիտարկելիս (տես աղյուսակ 2): Հանքարդյունաբերական արտադրության և բացահանքերի շահագործման 97.8% մասնա-

բաժնով բացարձակ առաջատարը Մարտակերտի շրջանն է, մինչդեռ մշակող արդյունաբերության (71%), էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ծավալներով (53.6%), ինչպես նաև ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման ցուցանիշներով (51.5%) ամենախոշոր դերակատարը՝ առանձին վարչական շրջանի կարգավիճակ ունեցող մայրաքաղաք Ստեփանակերտը:

Արցախի տարածքների կրճատումն առավել ակնառու և շոշափելի կդառնա հատկապես գյուղատնտեսության ոլորտի հնարավորությունների կորստի դիտակետից՝ լուրջ սպառնալիք հանդիսանալով ինչպես Արցախի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության համար: Աղյուսակ 3-ում արտացոլված է հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի աճեցման ներուժը նախապատերազմյան Արցախի վարչական շրջաններում: Բերված տվյալների համաձայն՝ հակառակորդի տիրա-

⁸ Աղյուսակի գունային բաժանումը պատահական չէ, ընտրված երանգները մատնանշում են վարչական շրջանների նկատմամբ արցախյան կամ ադրբեջանական գերակայության աստիճանը: Մուգ կապույտը խորհրդանշում է տարածքների նկատմամբ Արցախի միանձնյա տիրապետությունը, իսկ մուգ կարմավունը՝ Ադրբեջանի լիակատար իշխանությունը, առավել բաց երանգներն արտացոլում են երկու երկրների գերակայության տարբեր համամասնություններ: Ընտրված տրամաբանությունը պահպանվում է հոդվածի բոլոր աղյուսակներում:

⁹ ԱՀ ԱԿՄ, Արցախի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2019, էջ 198-199:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Արցախի արդյունաբերական արտադրանքի ծավալն ըստ տնտեսական գործունեության տեսակների¹⁰

ԱՀ վարչական շրջանները 2020թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ	Ամբողջ արդյունաբերությունը	Արդյունաբերություն՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների			
		Հանքարդյունաբերական արտադրություն և բացահանքերի շահագործում	Մշակող արդյունաբերություն	Էլեկտրականության, գազի, զուլրշու և լավորակ օդի մատակարարում	Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում
Ստեփանակերտ	35534.8 (28.4%)	743.3 (1.1%)	20161.7 (71%)	14185.6 (53.6%)	444.2 (51.5%)
Ասկերան	4044.2 (3.2%)	458.2 (0.7%)	2385.9 (8.4%)	1044.8 (3.9%)	155.3 (18%)
Հադրութ	2307.3 (1.9%)	3.3 (0.00%)	1561.9 (5.5%)	687.4 (2.6%)	54.7 (6.3%)
Մարտակերտ	72988.2 (58.4%)	67783.4 (97.8%)	725.4 (2.5%)	4419.1 (16.7%)	60.3 (7%)
Մարտունի	4520.4 (3.6%)	11.1 (0.02%)	3269.9 (11.5%)	1138.7 (4.3%)	100.7 (11.7%)
Շահումյան	1700.8 (1.4%)	-	28.2 (0.1%)	1672.6 (6.3%)	-
Շուշի	478.4 (0.4%)	6.6 (0.01%)	130.5 (0.5%)	318.9 (1.2%)	22.4 (2.6%)
Քաշաթաղ	3432.0 (2.7%)	288.0 (0.4%)	121.6 (0.4%)	2997.3 (11.3%)	25.1 (2.9%)
Ընդամենը	125006.1	69293.9	28385.1	26464.4	862.7

պետության տակ անցած Հադրութի, Շահումյանի և Քաշաթաղի շրջաններում էր գտնվում երկրի հացահատիկային մշակաբույսերի աճեցման 47.4% (560241.5 g) գումարային ներուժը, իսկ եթե դրան էլ գումարենք միայն մասամբ Արցախի «նորացված» սահմաններում մնացած Ասկերանի, Մարտունու և Շուշիի շրջանների համախառն բերքի առնվազն կեսը (235948.1 g կամ ընդհանուրի 20%-ը), ապա պարզ կդառնա, որ Արցախը զրկվել է հացա-

հատիկային բերքի համախառն ներուժի առնվազն 67.4%-ից: Այս ցուցանիշում ներառված չեն թշնամու կողմից գրավված Մարտակերտի շրջանի այն տարածքները, որոնք հնարավոր է՝ ընդգրկում են նաև հացահատիկային ցանքատարածություններ:

Եվ քանի որ հացահատիկի արցախյան բերքի զգալի մասն ավանդաբար մատակարարվել է Հայաստանի Հանրապետությանը, փաստորեն, առաջիկայում վեր-

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի աճեցման 2019 թ. ներուժն ըստ Արցախի վարչական շրջանների¹¹

ԱՀ շրջանները 2020 թ. սկզբին	Տարածությունները (հա)	Բերքատվությունը (g/ha)	Համախառն բերքը (g)
Ստեփանակերտ	-	-	-
Ասկերան	13496.1	20.2	239387.5
Հադրութ	16158.0	17.8	273199.0
Մարտակերտ	10097.2	17.0	149397.9
Մարտունի	15044.4	16.9	228996.3
Շահումյան	156.4	11.5	1797.5
Շուշի	233.6	15.0	3513.0
Քաշաթաղ	19271.5	15.4	285245.0
Ընդամենը	74457.2	17.3	1181536.2

¹⁰ ԱՀ ԱՎԾ, Արցախի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2019, էջ 200:
¹¹ ԱՀ ԱՎԾ, «Պարենային ապահովություն» վիճակագրական տեղեկագիր, Ստեփանակերտ, 2019, էջ 33 / http://stat-nkr.am/files/publications/2020/Parenayin_2019.pdf:

ԱՂՅՈՒՍԱԿ 4

Ընտանի կենդանիների գլխաքանակը 2020 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ՝ ըստ Արցախի վարչական շրջանների¹²

ԱՀ շրջանները 2020 թ. սկզբին	Կով	Խոզ	Ոչխար և այծ	Թռչուն
Ստեփանակերտ	101	1350	150	32000
Ասկերան	3901	5750	11112	123479
Հադրուբ	2808	4982	8812	50900
Մարտակերտ	3165	3372	7990	55716
Մարտունի	3449	7467	8001	165748
Շահումյան	1305	827	1136	7706
Շուշի	482	408	4817	9920
Քաշաթաղ	4737	4313	21433	29796
Ընդամենը	19948	28469	63451	475265

ջինս նույնպես կրախվի հացահատիկի նոր մատակարարներ փնտրելու խնդրին:

Համարժեք իրավիճակ է նաև անասնապահության առումով, քանի որ տնային կենդանիների գլխաքանակի գերակշիռ մասն ամբողջությամբ կամ մասնակիորեն կենտրոնացված էր Ադրբեջանի իշխանության տակ անցած Արցախի վարչական շրջաններում (աղյուսակ 4): Այսպես՝ Հադրուբի, Շահումյանի և Քաշաթաղի շրջաններում էին բուծվում Արցախի Հանրապետության կովերի 44.4%-ը, խոզերի 35.6%-ը, ոչխարների ու այծերի 49.5%-ը և ընտանի թռչունների 20.7%-ը: Միաժամանակ, եթե սրանց գումարենք մասնակիորեն Արցախում մնացած Ասկերանի, Մարտունու և Շուշիի շրջ-

անների ընտանի անասունների բուծման ներուժի ուղիղ կեսը, ապա ակնհայտ կդառնա, որ Արցախը, ընդհանուր առմամբ, զրկվել է կովերի գլխաքանակի առնվազն 64%-ից, խոզերի՝ 59.5%-ից, ոչխարների ու այծերի՝ 68.4%-ից և թռչունների՝ 52.2%-ից: Հետևաբար՝ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, կարող ենք առաջիկայում Արցախում և Հայաստանի Հանրապետությունում կանխատեսել մասնաբերքի առաջարկի անկում, որը կուղեկցվի համապատասխան գնաճով:

2020 թ. հունվարի 1-ի դրությամբ, ըստ ԱՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի բաժնի տվյալների, իրավաբանական անձանց թիվը կազմել

ԱՂՅՈՒՍԱԿ 5

ԱՀ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կառուցվածքն ըստ շրջանների¹³

Շրջաններ	Ընդամենը		Իրավաբանական անձինք		Անհատ ձեռնարկատերեր	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
Ընդամենը	15766	100	4203	100	11563	100
ը. Ստեփանակերտ	8666	55.0	2953	70.3	5713	49.4
Ասկերան	1225	7.8	212	5	1013	8.8
Հադրուբ	954	6.1	182	4.3	772	6.7
Մարտակերտ	1609	10.2	240	5.7	1369	11.8
Մարտունի	1906	12.1	317	7.5	1589	13.7
Շահումյան	124	0.8	20	0.5	104	0.9
Շուշի	591	3.7	155	3.7	436	3.8
Քաշաթաղ	691	4.3	124	3	567	4.9

¹² ԱՀ ԱԿԾ, «Արդյունաբերության, գյուղատնտեսության և շինարարության հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ ղասակարգման /վիճակագրական ամփոփ օպերատիվ տվյալներ/», 2020 թ. հունվար-օգոստոս, Ստեփանակերտ, 2020, էջ 8-9 / http://stat-nkr.am/files/publications/2020/svodka_ogostos_2020.pdf

¹³ Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն (ԱՀ ԱԿԾ), «Զեկույց բիզնես-ռեգիստրի հետազոտության», Ստեփանակերտ, 2020, էջ 5 / http://stat-nkr.am/files/publications/2020/biznes_register_2019.pdf

ԱՂՅՈՒՍԱԿ 6



2019 թ. ԱՀ քաղաքացիներին տրամադրված ֆինանսական աջակցությունը (սուբսիդավորման գումարները)՝ ըստ ԱՀ շրջանների և աջակցության ուղղությունների¹⁴

Հ/Հ	Շրջանը	Աջակցության ուղղությունը	Աջակցության (սուբսիդիայի) չափը (մլն դրամ)
1.	ք. Ստեփանակերտ	բակելի տարածքի գնում	767.8
		բնակելի տան կառուցում	172.6
		բնակելի տարածքի վերանորոգում	155.1
2.	Ասկերանի շրջան	բակելի տարածքի գնում	3.6
		բնակելի տան կառուցում	5.2
		բնակելի տարածքի վերանորոգում	4.3
3.	Մարտունու շրջան	բակելի տարածքի գնում	7.5
		բնակելի տան կառուցում	5.3
		բնակելի տարածքի վերանորոգում	2.5
4.	Մարտակերտի շրջան	բակելի տարածքի գնում	2.2
		բնակելի տան կառուցում	1.1
		բնակելի տարածքի վերանորոգում	1.0
5.	Շուշիի շրջան	բակելի տարածքի գնում	17.4
		բնակելի տան կառուցում	2.7
		բնակելի տարածքի վերանորոգում	10.0
6.	Հաղոյփի շրջան	բակելի տարածքի գնում	1.0
		բնակելի տան կառուցում	3.0
		բնակելի տարածքի վերանորոգում	0.5
7.	Քաշաթաղի շրջան	բակելի տարածքի գնում	0.0
		բնակելի տան կառուցում	1.0
		բնակելի տարածքի վերանորոգում	0.4
ԸՆԴԱՄԵՆԸ			1164.2

է 4203 միավոր, անհատ ձեռնարկատերերինը՝ 11563 միավոր, որոնց բաշխվածությունը, ըստ վարչական շրջանների, բերված է աղյուսակ 5-ում: Ընդ որում, աղյուսակում ներառվել են 2019 թ. պետական ռեգիստրի միասնական գրանցամատյանում առկա տնտեսավարող սուբյեկտներն անկախ իրենց տնտեսական ակտիվության աստիճանից (այդ թվում՝ 2019 թ. ընթացքում լուծարվածները):

Իրավիճակը կարելի է բարվոք գնահատել ըստ գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի բացարձակ ցուցանիշների՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանց գերակշիռ մասը Ստեփանակերտում է, ինչպես նաև առավելապես (Մարտակերտ) կամ մասամբ (Մարտունի) Արցախի վերահսկողության

ներքո մնացած շրջաններում: Այդուհանդերձ, գրանցված կազմակերպությունների թիվն իրական պատկերացում չի կարող տալ հնարավոր կորուստների մասին, քանի որ որևէ կերպ չի արտացոլում դրանց գործունեության արժեքային ցուցանիշներն ու նպաստը տնտեսության զարգացման հարցում: Ուստի Արցախի կորսված տնտեսական ներուժի գնահատում հնարավոր է իրականացնել առավել խորքային ուսումնասիրությունների և որակական տվյալների առկայության դեպքում:

Բնակարանաշինության ծավալների աճի պայմաններում վերջին տարիներին Արցախի ներդրումային հիմնադրամը հիփոթեքային վարկերի սուբսիդավորման եղանակով զգալի ֆինանսական աջակցություն է տրամադրել Արցախի Հանրա-

¹⁴ Արցախի ներդրումային հիմնադրամ, 2019 թվականի գործունեության հաշվետվություն, Ստեփանակերտ, 2020 թ. (Արցախի ներդրումային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2020 թ. մարտի 23-ի թիվ 17 որոշման հավելված), էջ 26, <http://www.aif.am/images/Hashvetvutyun-2019.pdf>

պետության քաղաքացիներին՝ բնակելի տների կառուցման, բնակելի տարածքների գնման կամ վերանորոգման նպատակներով (աղյուսակ 6): Այսպես՝ միայն Ստեփանակերտում 2019 թ. բնակելի տների կառուցման, տարածքների գնման կամ վերանորոգման համար քաղաքացիներին տրամադրվել է շուրջ 1095.5 մլն դրամի ֆինանսական աջակցություն կամ այդ նպատակով Արցախի ներդրումային հիմնադրամի ֆինանսական հատկացումների 94.1%-ը, հաջորդիվ՝ մեծությամբ երկրորդ քաղաքը Շուշին է՝ շուրջ 30.1 մլն դրամի (կամ 2.6%-ի) հասնող ֆինանսական աջակցությամբ, որը, ցավոք, մնաց սահմանի մյուս կողմում: Մնացած վարչական շրջաններում բնակչության կեցության պայմանների բարելավմանն ուղղված ֆինանսավորումը համեմատաբար փոքր ծավալների է:

Թեև ստեղծված պայմաններում բնակարանաշինությանն ուղղված ներդրումների

կենտրոնացումը մայրաքաղաքում առաջին հայացքից պետք է «սփոփի» համարվեր, սակայն, հաշվի առնելով արցախյան 2-րդ պատերազմի ընթացքում Ստեփանակերտի միտումնավոր ու անդադար հոթիռակոծումները և դրանց պատճառած ավերածության ծավալները՝ ֆինանսական և գույքային կորուստների չափն աննախադեպ է դառնում:

Այսպիսով՝ կատարված ուսումնասիրության արդյունքում թեև հնարավոր դարձավ վեր հանել հետպատերազմյան Արցախի տնտեսական հնարավորությունների առավել շոշափելի կորուստները, սակայն թեման դեռևս կարիք ունի համակողմանի ուսումնասիրության, քանի որ, առանց առկա ներուժի հստակ գնահատման, հնարավոր չէ մշակել երկրի վերածննդի և հետագա զարգացման ռազմավարություն...

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն (ԱՀ ԱՎԾ), ԱՀ ԱՎԾ, Արցախի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2019, <http://stat-nkr.am/hy/component/content/article/1043-----2019>
2. ԱՀ ԱՎԾ, «Արդյունաբերության, գյուղատնտեսության և շինարարության հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման /վիճակագրական ամփոփ օպերատիվ տվյալներ/», 2020 թվականի հունվար-օգոստոսին, Ստեփանակերտ, 2020 թ., http://stat-nkr.am/files/publications/2020/svod-ka_ogostos_2020.pdf
3. ԱՀ ԱՎԾ, «Ձեկույց բիզնես-ռեգիստրի հետազոտության», Ստեփանակերտ 2020, http://stat-nkr.am/files/publications/2020/biznes_register_2019.pdf
4. ԱՀ ԱՎԾ, «Պարենային ապահովություն» վիճակագրական տեղեկագիր, Ստեփանակերտ, 2019 թ., http://stat-nkr.am/files/publications/2020/Parenay-in_2019.pdf
5. Արցախի ներդրումային հիմնադրամ, 2019 թվականի գործունեության հաշվետվություն, Ստեփանակերտ, 2020 թ. (Արցախի ներդրումային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2020 թ. մարտի 23-ի թիվ 17 որոշման հավելված), <http://www.aif.am/images/Hashvetvutyun-2019.pdf>
6. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դասակարգիչ ՀԴ-007-2014» (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 20-ի՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Վարչատարածքային բաժանման միավորների դասակարգիչ» ընդունելու մասին» N 106-Ն հրամանի հավելված):
7. Հայաստանի Հանրապետության վարչապետի, Արբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը, 10.11.2020, <https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/>
8. Մելքումյան Ս., Արցախ-Ղարաբաղ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Երևան, «Յաստն ՍՊԸ», 2010, 415 էջ, ISBN 978-9939-829-02-9:

Анна ПАХЛЯН*Приглашенный эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук, доцент*

ПАНОРАМА ВОЙНЫ

**ЭКОНОМИЧЕСКИЙ ПОТЕНЦИАЛ АРЦАХА ПОСЛЕ «ДЕМАРКАЦИИ ГРАНИЦ»:
ВОЗМОЖНОСТИ, ОСТАВШИЕСЯ НА ДРУГОЙ СТОРОНЕ ГРАНИЦЫ...**

Вторая Арцахская война, развязанная 27 сентября 2020 года, закончилась тяжелыми человеческими, территориальными и экономическими потерями для Арцаха и Армении, реальные масштабы которых все еще нуждаются в уточнении и всесторонней оценке. Таким образом, в рамках данной статьи на основе сопоставления имеющихся данных Национальной статистической службы Республики Арцах и других официальных источников с фактическими территориальными изменениями, проведено предварительное исследование экономического потенциала территорий, оккупированных Азербайджаном по окончании боевых действий, переданных противнику на основе трехстороннего заявления и находящихся под контролем Арцаха, с целью выявления сохранившихся и утраченных экономических возможностей.

Ключевые слова: *Республика Арцах, административные районы, оккупированные территории, переданные территории, экономика, промышленность, сельское хозяйство*

Anna PAKHLYAN*Invited expert of «Amberd» Research Center, ASUE,*

WAR PANORAMA

**ARTSAKH ECONOMIC POTENTIAL AFTER «NEW DEMARCATION OF BORDERS»:
OPPORTUNITIES REMAINING ON THE OPPOSITE SIDE OF THE BORDER...**

The Second Artsakh War, unleashed on September 27, 2020 ended with heavy human, territorial, and economic losses for Artsakh and Armenia, the real scale of which still needs some clarification and comprehensive assessment. Therefore, in the framework of this paper, based on a combination of data available at the National Statistical Service of the Republic of Artsakh and other official sources with de facto territorial changes, a preliminary study of the economic potential of the territories remained under the control of Artsakh, territories occupied by Azerbaijan at the end of the hostilities and handed over to the enemy by a trilateral announcement was carried out to identify the preserved and lost economic opportunities.

Keywords: *Artsakh republic, administrative districts, occupied territories, transferred territories, economy, industry, agriculture*